




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ.Ս.Խ.Հ.  
ԱՌԺՈՂԿՈՄԱՏ

№ 12 ՍԵՆ-ԼՈՒՍ ԳՐԵԳՐԵՆ և 12

ՄԱՇԿԻ ՄԻ ՔԱՆԻ  
ՏԱՐԱԾՎԱԾ ՀԻՎԱՆ-  
ԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ.Բ.Գ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

616.5

Մ-29



30 JUL 2010

Հ. Խ. Ս. Հ. ԱՌԺՈՂԿՈՍՏ

№ 12 ՍԱՆՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 12

616.5

V-29

my

ՄԱՇԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԱԾՎԱԾ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵՐԿՐԸՐԴ ՏԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրահարանի անունը Առողջության



1981

1234

38



ԳԵՅԷՐԱՅԻ ՑԳԱՐԱՆ

Գրադրեալ. 6198 Բ. (բ). Ցիրած 3000. Գառվեր 108.

I

# ՄԱՇԿԻ ԴԵՐՆ ՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաշկը մի առանձին գործարան է և կատարում է իրեն հատուկ աշխատանք մարդու կազմվածքի պաշտպանության համար:

Մաշկը թեև հաստ է, բայց պարունակում է իր մեջ մարդու կյանքի համար շատ անհրաժեշտ գործարաններ:


Մաշկը պատում է մարդու մարմինը դրսից և պաշտպանում է իրեն տակ գտնվող մարմնի մասերն արտաքին աշխարհի վնասակար ազդեցություններից:

Առաջին նկարը ցույց է տալիս թե՛ ինչ կազմ ունի մաշկը: Նրա մեջ կան ներվեր, արյան անոթներ, քրտնքի և ճարպի գեղձեր, մաշկը սրանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ ու կարևոր դերը:

Մաշկը շատ է յենթակա հարվածների և միևնույն ժամանակ նա ունի մի լավ հատկություն, չուտ վերականգնել իր կորցրած մասը: Այդ բանը շատ լավ գիտեն բանվորներն ու գյուղացիները, վորոնց մաշկը շատ հաճախ է վերքեր ստանում աշխատանքի ժամանակ:

Յեթե մաշկի վերքը փոքր է, մաշկը վերականգնում է իր կորցրած մասն ամբողջությամբ:





Նկար 1. Կտրված մաշկ

- 1) մաշկ, 2) ճարպի գեղձ, 3) մաղի պտուկ, 4) քրտնաթիղձ, 5) ճարպի բլթակներ յենթամաշկի շերտում, 6) ներվային թելեր, 7) արյան անոթներ

պես. յեթե վերքը մեծ է, մաշկի կորցրած տեղում սպի յե գոյանում և այս բոլորը սովորաբար կատարվում է առանց բարդությունների մարդու համար: Բայց յեթե մաշկի վերքը չափ է մեծ և վնասված է մաշկի  $\frac{2}{3}$ , այն մամանակ մարդը մեռնում է: Ահա թե վորքան մեծ նշանակություն ունի մաշկը մարդու համար: Ուրեմն յուրաքանչյուր բանվոր և գյուղացի պետք է լավ խնամք տանի և պաշտպանի իր մաշկը:

## ԻՆՁԻՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԱՇԿԸ

Մաշկը պաշտպանում է մարդու մարմինը, որդանիզմը դոսի վտանգներից և զանազան մանրեններից:

Այն մաշկը, վոր վերք ունի, չափ չուտ փոխանցում է ոգի մեջ յեղած վնասակար և ախտարեք մանրեններն արյան:

## ԻՆՁԻՆՇԱՄԱՐ Ե ՔՐՏԻՆՔԸ

Մաշկն արտադրում է քրտինք և ճարպ:

Քրտինքը հեռացնում է մարմնի միջից վնասակար և թունավոր դարձած նյութերը:

Յերք մարդ հանգիստ է, քրտինքը դուրս է դալիս աննկատելի կերպով, գոլորշու ձևով, բայց յերք մարդ աշխատում է, մանավանդ աճառը, քրտինքը դուրս է դալիս մեծ քանակությամբ հեղուկի ձևով:

## ԻՆՁԻՆՇԱՄԱՐ Ե ՃԱՐԱԳԸ

Ճարպն արտադրում են մաշկի ճարպային գեղձերը: Մաշկն ունի ծակոտիներ, վորոնց միջոցով արտադրում է քրտինք ու ճարպ: Ճարպը փափկացնում է մաշկն և մազերը. ճարպի շնորհիվ է, վոր մաշկը չի չորանում և ճեղքվածքներ չի տալիս. ճարպի շնորհիվ է պահպանվում մաշկի ամբողջությունը: Այն մաշկը, վորը չուտ է ճեղքվում կամ սլոկվում,



չուտ ել կարող ե վարակվել զանազան մանրե-  
ներով:

Ճարպ քսած մաշկը փափուկ ե, ճկուն ե  
հեշտությամբ ե տանում ջրի, ուղի ջերմության  
և սառնության փոփոխությունները, իսկ չոր  
ու կոշտ մաշկը՝ վոչ:

Ամենքին լավ հայտնի յե, վոր վոչ թե մի-  
այն մարդու մաշկը, այլ և կենդանիների կա-  
շին ունի ճարպ: Բացի այդ, գիտեն, վոր ամեն  
տեսակ կաշվեղեն լավ պահելու համար հար-  
կավոր ե նրան ճարպ քսել:

### ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՇԿԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՄԱՐՄՆԻ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Մաշկի ամենապլխավոր դերերից մեկն ել  
մեր մարմնի ջերմության կանոնավորելն ե:

Յերբ մարդ գտնվում ե տաքացրած սե-  
նյակում արևի տակ կամ յերբ լարված աշխա-  
տանք ե կատարում, նրա մարմնի տաքություն-  
նր բարձրանում ե ավելի շատ, քան պետք ե  
նրան: Այդ ժամանակ մարդու արյունը շատ  
մեծ քանակությամբ ե հոսում դեպի մաշկը:

Դրանից մաշկը լայնանում ե և մարմնի  
ջերմության ավելսրդը տալիս ե ողիմ ակնի-  
ջապես կամ քրտնեքի միջոցով, վորից և մար-  
մինը սառչում ե շնորհիվ նրա, վոր գոլորշի-  
ացող քրտինքը խլում ե մարմնի ավելորդ տա-  
քությունը: Հակառակն ե լինում, յերբ մարդ  
գտնվում ե ցուրտ տեղում: Այս դեպքում՝ մաշ-

կի անոթները նեղանում են, արյունը մարմնի  
մակերևութից հոսում ե դեպի ներքին գործա-  
րանները, մաշկը գունատվում ե, մինչև ան-  
գամ կապտում, վորովհետև մաշկի արյան շըր-  
ջանառությունը դժվարանում ե: Մաշկը կուչ  
ե գալիս. մարդու մաշկը ստանում ե սառի  
կաշվի տեսք, մազերի, մինչև անգամ աղվա-  
մազի, մկանները կծկվում—կրճատվում են,  
մազերը դուրս են ցցվում, իսկ այս բոլորի հե-  
տևանքով պակասում ե մարմնի ջերմության  
հեռացումը: Այդ ժամանակ մաշկի քրտինքի  
արտադրումն ել խիստ պակասում ե:

Շնորհիվ մաշկի նկարագրած հատկու-  
թյունների՝ մարմնի ջերմությունը մնում ե  
մշտական և հավասար դրության մեջ. Բայց  
մաշկի այդ հատկությունն անսահման չե. նա  
ունի իր չափ ու սահմանը:

Ցուրտ յերկրներում, կամ հենց չափավոր  
կլիմա ունեցող մեր յերկրում, մաշկն ի վիճա-  
կի չե պահպանել մարդու մարմնի մշտական  
տաքությունը, ուստի մարդիկ իրենց մարմնի  
ջերմությունը պաշտպանելու համար ստիպ-  
ված են ծածկել իրենց՝ մարմինը հագուստով,  
իսկ կենդանիները պաշտպանում են իրենց ջեր-  
մությունը բրդով կամ փետուրներով:

### ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՇԿԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՐՄՆԻՆԸ ՋԱՆԱՋԱՆ ՎՆԱՍՈՒՄՆԵՐԻՑ

Մաշկն ունի բազմաթիվ ներվեր, վորոնք  
զգում են տաքն ու ցուրտը, զգում են ցավ,  
յերբ մաշկը ստանում ե հարված:



Մաշկի ներվերն այս բոլոր զգացումները փոխանցում են գլխի ուղեղին, վորը և կարգադրում է կատարել համապատասխան գործողութիւն մարմնի պաշտպանութեան համար: Որինակ՝ մարդը ձեռքը տաք առարկային դիպցնելիս՝ իսկույն հետ է քաշում կամ ցավ դգալիս՝ հեռանում է. յեթե ցավի զգացումը չը լիներ, մարդ կարող էր մեծ վնասումներ ստանալ և հնարավորութիւն չեր ունենա ժամանակին պաշտպանվել դրանցից:

Մաշկի այդ հատկութիւնը կոչվում է շոշափումն, այդ պատճառով եւ մաշկը համարվում է շոշափելիքի գործարան:

### ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԽՆԱՄԵԼ ՄԱՇԿԸ

Ով մտածում է իր առողջութեան մասին, պետք է հսկի իր մաշկի և նրա կանոնաւոր և բնական աշխատանքի վրա:

Այս կանոնների պահպանութիւնը ցույց է տալիս մաշկի առողջապահութիւնը:

### ՎՈՐՈՂՔ ԵՆ ԱՅՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Պետք է մաշկը հաճախ (իսկ նրա բաց մասերն ամեն օր) մաքրել ճարպից, կեղտից և մաշկի մակերեսային մեռած բջիջներից. այս բոլորը կիսովում են մաշկի վրա որովա աշխատանքից հետո:

Մաշկը պետք է մաքրել աշխատանքից անմիջապէս հետո: Մաքրելու ամենալավ միջո-

ցը— տաք ջրով և սառնով լվացվելն է. տաք ջուրը սրբում է ճարպն ու կեղտը և բաց է անում մաշկի ծակոտիները. բացի այդ, սապոնը տարրալուծում է ճարպը, հալում ու հեռացնում: Ճարպի հետ միասին հեռանում է և կեղտը:

Լվացվելը մի ոգուտ ևս ունի. մաշկի տաք ջրով տրորելը գրգռում է նրան, արյան անոթները լայնանում են և այդպիսով բարձրանում է մաշկի գործունեութիւնը:

Լվացվելուց հետո մաշկն սկսում է ավելի լավ գործել, ավելի լավ ստանալ ոնունդ և ավելի լավ դուրս հանել մարմնի մեջ կիսոված վնասակար նյութերը:

Ամենքին եւ լավ հայտնի յե, թե մարդ վորքան լավ է զգում իրեն բաղնիքից կամ տաք վաննայից հետո: Մաշկի լավ գործունեութիւնը նպաստում է և մյուս գործարանների լավ աշխատելուն:

### ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԱՇԿԻ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Մաշկի մաքրումն ամենօրյա լվացումներով և ամեն շաբաթվա բաղնիքով լավագույն կանխարգելիչ միջոցն է մաշկի զանազան հիվանդութիւնների դէմ: Այսպիսի խնամքը պահում է մաշկն առողջ, գործունայ և առույգ դրութեան մեջ, վորը և խանգարում է զանազան մաշկախտերի ծագումը:



Մաշկի մաքուր պահելը կանխարգելում է ուրիշ հիվանդութիւնների, վորոնք մաշկի միջոցով են անցնում ներքին գործարաններին. որինակ՝ սիֆիլիսի թույնն անցնում է մարդուն այն տեսակ մաշկի միջոցով, վորը գտնւում է վատ դրութեան մեջ, վորի վրա կան պոկ-վածք կամ քերծվածք: Միքերախտը, կարմիր քամին նույնպէս անցնում են մարդուն մաշկի վրայի պոկվածքով կամ քերծվածքով:

Մազերն ու յեղունգները նույնպէս պետք է մաքուր պահել և ժամանակ առ ժամանակ կտրել:

Չպետք է մոռանալ, վոր մարդու ամենակեղտոտ տեղը մազերն ու յեղունգներն են, ուստի նրանց մաքրութեան մասին աւելի ևս պետք է հոգալ:

Մաշկի մաքրութեան համար շատ մեծ նշանակութիւն ունի և սպիտակեղենի փոխելը: Մաշկին կպած հագուստը պետք է անպատճառ սպիտակ կտորից լինի, վոր նկատելի լինի կեղտն ու միջատները: Սպիտակեղենը պետք է փոխել շաբաթը գոնե մեկ անգամ:

### ՈՂԻ ՅԵՎ ԱՐԵԳԱԿԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՇԿԻ ՀԱՄԱՐ

Մաշկի առողջ դրութեանը շատ են նպաստում բայց ողը և արեգակի ճառագայթները:

Արեգակի ճառագայթները և ամեն որ սառը ջրով չփումները շատ են ամրացնում մաշկը:

Իսկ աճրուցած մաշկը դժվար է պոկվում և շուտ չի վարակւում:

### ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԱՇԿԻ ՄԱՐՐՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնապէս պետք է ուշադրութիւն դարձնել յերեսների մաշկի վրա, վորովհետեւ նրանց մաշկը շատ նուրբ է, շատ շուտ է վնասւում և վարակւում: Յերեսները հենց փոքր հասակից պետք է իմանան մաշկի նըշանակութիւնն և նրա խնամքը, վոր հենց իրենք լավ հոգ տանեն իրենց մաշկի մասին:

Յերեսայի մաշկի յուրաքանչյուր քերվածքը և պոկվածքը պետք է դրավի ծնողների ուշադրութիւնը, վորովհետեւ այդ քերծվածքն ու պոկվածքները կարող են շատ հիվանդութիւնների պատճառ դառնալ:

### ԻՆՁԻՑ ԵՆ ԱՌԱՋ ԳԱՆԻՍ ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաշկի հիվանդութիւնների մեծ մասն առաջ է գալիս նրանից, վոր հիվանդութեան վարակը ներս է մտնում մաշկի մեջ դրսից, բնականում է մաշկի մեջ և հիվանդացնում նրան:

Մաշկի այդ հիվանդութիւններն անցնում են հիվանդ մարդուց և կենդանուց կամ վարակված իրերից առողջ մարդուն, ուստի և կոչվում են վարակիչ հիվանդութիւններ: Մաշկի հիվանդութիւնների պատճառը (վարակը)



չատ փոքր կենդանի արարածներ են, վորոնք մակարույծներ են կոչվում:

Այդ մակարույծները մտնում են մաշկի մակերեսային շերտը և հիվանդացնում նրան, իսկ մաշկի խորը մասերը, վորտեղ արյան անոթներ չառ կան, կարող են մտնել միայն մաշկի վորոշ հիվանդությունների մանրէներ (որինակ՝ սիրիբախտի, կարմիր քամու և այլն), վորոնք առաջացնում են կազմվածքի ընդհանուր վարակում:

### ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նրանք շատ շուտ են բուժվում, յեթե շատ շուտ ուշադրություն են դարձնում և շուտ ել դիմում բժշկին. ընդհակառակը, դժվար են բուժվում և վատ հետեմանքներ են տալիս, յեթե նրանց վրա իր ժամանակին և հարկավոր ուշադրությունը չեն դարձնում: Մաշկի վարակիչ հիվանդություններով կարելի յե հիվանդանալ մի քանի անգամ:

### ԻՆՉՈ՞Ւ ԵՆՆ ՇԱՏ ՏԱՐԱԾՎԱԾ ՄԱՇԿԻ ՎԱՐԱԿԻԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաղուց հայտնի յե, վոր վարակիչ հիվանդությունները մշտական գոյություն ունեն այնտեղ, վորտեղ կա աղքատություն, տգիտություն և բնակարանային նեղվածքություն: Նույնպես հայտնի յե բոլորին, վոր մաշկի խնամքի ամենահասարակ միջոցներն անգամ

բախտահան են վարակիչ հիվանդություններից պաշտպանվելու համար:

Բայց դժբախտաբար դժվար և դործադրել այդ հասարակ միջոցներն այնտեղ, վորտեղ մարդիկ ապրում են խիտ, լավ սնունդ չեն ստանում, սակավ են լվացվում, սակավ լողանում, ուշ-ուշ են փոխում սպիտակեղենն ու միշտ տնքում են ծանր ու քայքայիչ աշխատանքի տակ: Առանձնապես տուժում և այդ հիվանդություններից չքավորների, աշխատավորների, սիրուետարների յերեխաների մաշկը:

### ՎՈՐՏԵՂ ԵՆ ՇԱՏ ՏԱՐԱԾՎԱԾ ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարակիչ հիվանդություններն ընդհանրապես և, մաշկինը մասնավորապես, շատ են տարածված գյուղերում, վորտեղ հակաառողջապահական դրությունը սուր և. յեթե դրան ավելացնենք և գյուղի աղքատությունն ու տգիտությունը, այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչու մաշկի հիվանդությունը համարվում և չքավորների հիվանդություն:

### ՊԱՅԲԱՐ ՄԱՇԿԻ ՎԱՐԱԿԻԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունների, այնպես ևլ մաշկի վարակիչ հիվանդությունների պայքարը պահանջում և կանխար-



գելիչ միջոցներ, վորոնք յերկու տեսակի յեն՝  
անձնական և հասարակական:

Անձնական կանխարգելիչ միջոցներն են՝  
մաքրություն բնակարանի, մաքրություն մար-  
մնի, մաքրություն սպիտակեղենի և հագուս-  
տի, մաքրություն աշխատավայրի և մաքրու-  
թյուն գործի մեջ և այլն. իսկ հասարակական  
միջոցները՝ լայն մասսաների լուսավորու-  
թյուն, բնակարանների բարելավում, լավ ջրի  
մատակարարում, սննդի լավացում, յերեխա-  
ների խնամք, մայրերի լուսավորություն և  
այլն: Սա յե խորհրդային բժշկության հիմքը.  
այսինքն՝ լավացնել կենցաղի և աշխատանքի  
պայմանները, վոր չլինեն հիվանդություններ,  
վորովհետև դրանք, մանավանդ վարակիչ հի-  
վանդությունները, կապ ունեն կենցաղի և աշ-  
խատանքի հետ:

## ՎՈՋԼՈՏՈՒԹՅՈՒՆ

### ԻՆՁԻՑ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՎՈՋԼՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Վոջլոտությունն առաջ է գալիս կեղտից և  
աղքատությունից: Վոջլոտությունը հետևանք  
է կյանքի ծանր պայմանների, հետևանք է ա-  
մենաանհրաժեշտ և ամենատարրական հարմա-  
րությունների բացակայության, որինակ՝ ջրի,  
սապոնի, բնակարանի, հագուստի կամ սակա-  
վության, յայց գլխավորապես անկուշտուրա-  
կանության:

Վոջլոտությունն ևս առավել սաստիկ է լի-  
նում պատերազմի, սովի, քաղաքացիական կը-  
ռիվների ժամանակ: Այդ շրջանում ժողովրդի  
ամբողջ զանգվածները բռնված են լինում վոջ-  
լոտությամբ. առաջ են գալիս շատ հիվանդու-  
թյուններ: Շատ դեպքերում վոջիլներն են լի-  
նում հիվանդությունների լավագույն միջնորդ-  
ները:

Շատ չի անցել այն օրից, յերբ բժավոր  
տիֆը կոտորածներ եր անում ամբողջ Հայաս-  
տանում, յերբ հիվանդանոցներում ու ապաս-  
տարաններում վոջիլներին կարելի չէր ժողովել  
բռներով:



Այդ և պատճառը, վոր բժշկութեան մեջ  
հետադարձ ու բժշակի տիպերը անվանուի են  
վորային տիպեր:

## ՎՈՋԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կա յերբ տեսակ վոջի



Գլխի  
վոջի



Ցայցի  
վոջի



Շորի  
վոջի

Նկար 2.

## ԳԼԽԻ ՎՈՋԻԼ

Գլխի վոջիլը զանազան գույնի յե լինում.  
նրա գույնը կախված է այն մարդու մազերի  
գույնից, վորի վրա գտնվում է նա. բեզեռի  
մոտ ազդարանակութեան վոջիլը սպիտակ է,  
իսկ նեգրերինը սև:

Այդ բնութեան որենք է և հատուկ բոլոր  
կենդանիներին. ապրում են այն կենդանիները,  
վորոնց գույնը համապատասխան է շրջապա-  
տող միջավայրին:

## ԽՆՁՊԵՍ Ե ՆԱ. ԲԱԶՄԱՆՈՒՄ

Վոջի եզը վորձից մեծ է և սաստիկ բեղմ-  
նավոր:

Վեց որվա մեջ եզ վոջիլն ածում է մոտ 60  
ձվիկներ, վորոնցից ութ որ հետո դուրս են գա-  
լիս պատիկ վոջիլներ:

Այդ վոջիլները մի քանի որից հետո հա-  
տունանում են, բեղմնավորվում ու սկսում ձու  
դնել:

Գլխի վոջիլի ձուն կոչվում է անիծ, վորը  
մի տեսակ մածուծիկ հյութով կապում է մազե-  
րին ու դժվարութեամբ պոկ գալիս:

## ԽՆՁ ՎՆԱՄՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՍ ՎՈՋԻՆՆԵՐԸ

Գլխի վոջիլների ամենաբիւրձ տեղը գա-  
գաթն է ու ծոծրակը: Վոջիլները գրգռում են  
գլխի մաշկն ու առաջացնում քոր: Յեվս առա-  
վել շատ են լինում քորի ճանգովածքները ծոծ-  
րակի մազերի յեզրին և հենց ծոծրակի վրա:

Կեղտոտ յեղունգներով քորելուց գլխի մաշ-  
կի վրա առաջ են գալիս բորբոքումներ և թա-  
րախոտ խոցիկներ:

Գլխի վոջիլն ամեն հասակի մարդու վրա  
կարող է լինել, բայց առավելապես յերեխա-  
ների, վորոնց մաշկի նրբութեան շնորհիվ խո-  
ցիկները և բորբոքումները մաշկի վրա ավելի  
շատ են լինում:

Յերբեմն թափախում խոցիկներն այնքան





չատ են լինում, վոր նրա վրայի չխուզված  
մազերը կպչում են միմյանց ու թաղիքի տեսք  
ընդունում, թախկուն է օտացվում:

### ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵԼ ԳԼԽԻ ՎՈՋԻԼՆԵՐԻՑ

Վոջիլներին վոչնչացնելու համար պետք է  
գործածել նրանց սպանող ճարեր:

Տաք ջրով և սապոնով գլուխը լվանալուց  
հետո գլխին քսել նավթ, կիսով հափ յուղ  
խառնած:

Բայց սովելի լավը հետևյալ միջոցն է:

Յերբ վոջիլները շատ են, պետք է գլխի  
մազերը տակից խուզել, մանավանդ, յերբ կա  
թախկուն: Վոջիլները պակասում են գլուխը  
լվանալուց և նոսր սանրով սանրելուց: Ամեն  
անգամ սանրելուց հետո, սանրը պիտի թաթա-  
խել յեռացրած ու շատ տաք քաղախի մեջ. այս  
ձևով սանրի վրա մնացած վոջիլներն ու նը-  
րանց անիծները սատկում են:

Կարելի չէ գործածել և անդիլի ոծանակ,  
լայց զգուշությամբ:

Առանձնապես պետք է ուշադրություն  
դարձնել յերեխաների գլխի մաքրության վրա,  
վորովհետև յերեխաներն առհասարակ շուտ են  
ընդունում վոջիլներ ընկերներից, մանավանդ  
դպրոցներում:

Մաքուր ընտանիքում յերեխաների գլխի  
վրա վոջիլ չի լինում:

Առողջապահական տեսակետից յերեխանե-  
րը չպետք է ունենան յերկար մազեր:

### ՇՈՐԻ ՎՈՋԻԼ

Հագուստի և սպիտակեղենի վոջիլը գլխի  
վրա ամենավին չի լինում: Շորի վոջիլը բնակ-  
վում է հագուստի և սպիտակեղենի ծալքերում,  
մանավանդ պարանոցի, ծոժրակի, նստելատե-  
ղի ու գոտկատեղի վրա:

Եգ վոջիլն իր ձվիկները (անիծը) դնում է  
վոչ թե մարմնի վրա, այլ սպիտակեղենի և  
հագուստի ծալքերում, վորոնք կպած են մարմ-  
նին: Վոջիլն իր անունդը ստանում է մար-  
դուն կծելով: Հետևի վոտներով կպչում է սպի-  
տակեղենին, իսկ առաջին վոտներով մարմնին  
և սուր խայթիչով ծծում է մարդու արյունը:

### ՄԱՐԴՈՒՆ ԻՆՉ ՎՆԱՍՆԵՐ ԵՆ ՏԱԼԻՍ ՎՈՋԻԼՆԵՐԸ

Վոջիլն առաջացնում է քոր, վորի շնորհիվ  
գրգռվում է մաշկը և գրանից քորը սաստկա-  
նում:

Ուժեղ քորելու պատճառով առաջանում են  
ճանգովածքներ, վորոնք յեղունգների տակի  
կեղտից վարակվում են, բորբոքվում և տա-  
լիս թարախով լցված մեծ ու պստիկ խոցիկ-  
ներ:

Վոջլային տիֆերը տարածում են հենց այդ  
վոջիլները. նրանք ծծելով հիվանդ արյունը,  
վարակվում են տիֆի թույնով, մանրեններով,  
վորոնք սակայն վոջիլն փնտս չեն հասցնում:



Մի քանի որից հետո այդ վոլիլն անցնում է առողջին, կծում է նրան, թողնում է իր կեղտոտությունն ու հյուսիսերը, վորից և վարակվում է առողջ մարդը:

Ահա թե վորքան վնասակար են մարդու համար վոլիլները:

### ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՇՈՐԻ ՎՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՄ

Շորի վոլիլների դեմ կռվելու ամենալավ միջոցը՝ անխնա կոտորել նրանց, պահպանել մարմնի, հագուստի և սպիտակեղենի մաքրությունը: Շարաթը մեկ անգամ փոխել սպիտակեղենը, լվանալ ու յեռացնել տաք ջրի մեջ, իսկ չորացնելուց հետո լավ հարթուկել տաք հարթուկով (ութոյով): Զրոյ և սապոնով հագուստը շուտ-շուտ մաքրել:

Յեթե չկան միջատասպան գործիքներ, պետք է շուտ-շուտ թափ տալ հագուստն ու չորերը (անկողինն ու մյուս չորերը) տաք թոնրի մեջ և հաճախ արևին տալ:

Մաքրանքը քնտանիքում վոջիլ չի կարող լինել:

### ՑԱՅԼՎՈՋԻԼ

Այս վոջիլը շատ փոքր է և մարդու մարմնի մաշկի գույնի, այնպես վոր շատ դժվար է նրան ջուկելը: Նա քորոցի գլխի չափ հազիվ լինի և առավելապես ապրում է սեռական գործարանների մազերի մեջ, դրա համար ել կոչ-

վում է ցայլվոջիլ: ցայլքը սեռական գործարանների մազոտ տեղն է: Թեև ցայլվոջիլը սովորաբար ցայլքի վրա յե լինում, բայց նա կարող է անցնել և վորի ու կրծքի վրայի մազերի կոնտակտների մազերին և մինչև անգամ հոնքերին ու արտևանունքներին: Բայց պիսի վրա յերբեք չի լինում: Ցայլվոջիլն անցնում է մեկից մյուսին, սեռական հարաբերության ժամանակ և հագուստի միջոցով:

Ցայլվոջիլը կծում է և առաջացնում քոր, վորը ճանդոված քների չի փոխվում:

### ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՑԱՅԼՎՈՋԻԼՆԵՐԻ ԴԵՄ

Ցայլվոջիլներին շուտ վոջնացնելու համար, հարկավոր է խուզել (ալելի լավը—ածիլի սեռական գործարանների վրայի մազերը, քսել որակաւն 2 անգամ սնդիկի ոծանակ (մարհամ) ու 3—4 որից հետո լողանալ:

Ցայլվոջիլներին կոտորելու տեսակետից շատ լավ է և Յերեանի բաղնիքների ցեխը:

Այդ ցեխը պարունակում է կիր և ունի մազերը վերանոջ հատկություն: Կարճ խուզած մազերին մի քանի որ սնդիկի ոծանակը քսելուց հետո, զնալ բաղնիք ցեխ զնել ու լվանալ: դրանից հետո թափվում են մազերը, վորոնց հետ միասին և ցայլվոջիլներն ու նրանց անիծները: միայն յերեսին ու գլխին չի կարելի քսել այդ ցեխից, վորովհետև աչքի մեջ կարող է ընկնել ցեխի մի կաթիլ, վորից կարող է թորթովել աչքն ու վնասվել:



# ՄԱՇԿԻ ՍՆԿԱՅԻՆ ԿԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Ի՞նչ՞ ՅԵՆ ԱՅԴ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԶՎՈՒՄ ՍՆԿԱՅԻՆ

Մաշկին ունի հիվանդություններ, վորոնք առաջ են գալիս բուսական աշխարհի մանրէներէրից, վորոնք կոչվում են սնկեր այն պատճառով, վոր այդ մանրէները բազմանում են սնկի նման. այդ մանրէները նույնպէս անտեսանելի յեն հասարակ աշխարհը:

Բնության մեջ շատ տեսակ սնկային մանրէներ կան, վորոնք ինչպէս և բակտերիաները, յերկու տեսակի յեն՝ չարվորակ և բարվորակ:

Բարվորակները նրանք են, վորոնք տնտեսութեան մեջ շատ մեծ դեր են խաղում, որինակ՝ մի քանի մերանները (թթլամորը)՝ իսկ չարվորակները մեծ վնաս են հասցնում թե մարդկանց, թե կենդանիներին և թե միջին տնդամ բույսերին, որինակ՝ խաղողի թփի, բամբակի և այլ ոգտակար բույսերի մի քանի հիվանդություններն առաջանում են վնասակար, չարվորակ սնկերից: Կան սնկեր, վորոնք հիվանդացնում են մաշկը. կան և այնպիսիները, վորոնք հատկապէս վնասում են մազերը:

Սնկային հիվանդությունները շատ վարակիչ են, բայց առավելապէս վարակիչ են թուլակազմ և վատ սնունդ ստացող յերեխաների համար:

## ՈՒՆԴՈՂ ԿԱՄ ԱԾԻԼՈՂ ՎՈՐՔԻՆ (ՄԿՆԱՏԱՄ)

Մաշկի սնկային հիվանդություններից մեկը խուզող վորքինն է, վորը շնորհիվ մազերի խուզված տեսքի, կոչվում է խուզող կամ ածիլող. այս հիվանդութեան ժողովրդական անունը—մկնատամ է, այսինքն՝ մի հիվանդություն, վորը մկան ատամի պէս կտրում է մազերը:

Այս հիվանդությունը շատ է տարածված նաև սնկային կենդանիների մեջ, որինակ՝ շների ու կատուների մեջ, վորոնցից և, գլխավորապէս, անցնում է մարդուն, մանավանդ յերեխաներին:

Այս հիվանդությունը, թեև մազերի հիվանդություն է, բայց կարող է լինել մաշկի և յեղունդների վրա:

## Ի՞նչ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԱՅԴ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Վարակվելուց մի քանի որ հետո սունկ—մանրէյի ընկած տեղում՝ մաշկի վրա հայտնվում են փոքրիկ կարմրավուն կլոր բծեր, վորոնց շուրջը դուրս են գալիս մանր բշտիկներ: Բծերը շատ շուտ թեփոփում են:

Յերբեմն հիվանդ մաշկի վրա գոյանում են փոքրիկ խոցիկներ, լցված թարախով. այդ խոցիկների բուժման համար յերկար ժամանակ է պետք և մեծ համբերություն:

Այդ հիվանդությունն ամենից շատ գլխի մազերի վրա յե լինում. սովորաբար գլխի



խուզված կլոր, մաղից դուրի տեղերը, ուր  
ծածկված են կրծված մաղերի դուրս ցցված  
մնացորդով:

Այդ հիվանդությունը շատ և տարածված  
մանկատներում և յերբեմն համաճարակի բը-  
նույթ է ստանում, անցնելով յերեսխաններից մե-  
ծերին, թեև շատ սակավ:

### ԻՆՁՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՄԿՆԱՏԱՄՈՎ

Մկնատամի մանրեներն անցնում են հի-  
վանդից առողջին կամ անմիջական շփման մի-  
ջոցով, որինակ՝ հիվանդի գլուխը կաշուով և  
առողջի գլխին՝ կամ հիվանդի սպիտակեղենի,  
անկողնու, թաշկինակի և այլ իրերի միջոցով:

Այս տեսակետից մեծ նշանակություն ու-  
նի հիվանդի հետ միասին մի անկողնում քնե-  
լը, հիվանդի սանրով սանրվելն և այլն....

### ԻՆՁՊԵՍ ՊԱՅԲԱՐԵԼ ՄԿՆԱՏԱՄԻ ԴԵՄ

Հսկել տնային կենդանիների մաքրության  
վրա, հսկել, վոր յերեսխաները չփում չունենան  
հիվանդ կենդանիների հետ:

Փոխել սպիտակեղենը, մաքուր պահել  
մաշկը:

Մանկատներում հաճախակի քննության յեն-  
թարկել յերեսխաններին, վոր կարելի լինի ժա-  
մանակին մեկուսացնել հիվանդներին, որ ա-  
ռաջ բժշկել նրանց և այդ ձեով տարածման ա-  
ռաջն առնել: Հիվանդների իրերն առողջներին  
համար չգործադրել, մանավանդ սանրն ու  
սպիտակեղենը, իսկ բժերն յերեվալուն պես՝

պետք է զիջել բժշկին. ժամանակին միջոցներ  
ձեռք առնել հիվանդության տարածման դեմ,  
վոր ուրիշները չվարակվեն. հիվանդ յերեսիա-  
յին գլխարկ հագցնել սպիտակ կտորից կարած,  
վորը միշտ պետք է գլխին լինի. այդ գլխարկը  
հաճախ լվանալ ու փոխել: Հիվանդությունը  
շատ դժվար է բժշկվում, մանավանդ գլխի  
վրա, ուստի պետք է զգուշ լինել վարակվե-  
լուց:

### ԳՈՆՋ (ԳՈՆՋՈՒԿ—ՔԱԶԱԼ—ՖԱՎՈՒՍ)

Գոնջը նույնպես վարակիչ հիվանդություն  
է և գլխավորապես լինում է գլխի մաշկի վրա:

Գոնջուկը շատ է տարածված այն տե-  
րում, ուր առողջապահական պայմանները վատ  
են, արևի ճառագայթները չեն ընկնում, բնա-  
կիչները շատ խիտ են ապրում և մաքրության  
կանոնները չեն պահպանում:

### ԻՆՁՊԻՍԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԳՈՆՋԸ

Գոնջը, ինչպես և մկնատամը, վնասում է  
մաղերը. սկզբում՝ յուրաքանչյուր մաղի շուր-  
ջը դուրս են գալիս դեղին կետեր, վորոնք դո-  
յանում են մաշկի վերին շերտի սակ:

Շատ շուտ այդ կետերը մեծանում են,  
կոշտանում, հաստանում և դառնում դեղին  
գույնի կեղանք և յերբ կեղանքը դուրս է գա-  
լիս, մաշկի յերեսը ստանում է դեղնավուն ըս-  
պիտակ դույն:

Մկնատամի կեղանքը թեփի նման է, մոխ-



բազույն, մանր և բարակ, իսկ գոնջի կեղանքը հաստ է, մեծ ու դեղին գույնի: Շատ հաճախ հիվանդությունը բռնում է ամբողջ գլուխը, մազերը թափվում են, վատ հոտ է գալիս գլխից, (միան հոտ) հիվանդն այլանդակվում է և ամեն կերպ աշխատում է առանձնանալ, մարդու չտեսնել, մի բան, վոր շատ վատ է ազդում հիվանդի հոգեկան դրության վրա:

Մազերի թափված անդում հիվանդության անցնելուց հետո այլ ևս մազ չի բսնում և հիվանդը մնում է ճաղատ (քաչալ), մանավանդ յերբ հիվանդությունը լինում է ծանր տեսակի և տեղում է յերկար, և յերբ չեն բժշկում ժամանակին: Մկնատամի նման գոնջուկը կարող է լինել և մարմնի ուրիշ տեղերի մաշկի և յեղունակների վրա:

Գոնջը միայն գլխի մազոտ մասի վրա չէ մեծ վնասումներ տալիս և դժվար բժշկվում, իսկ մարմնի ուրիշ տեղերի մաշկի և յեղունակների գոնջն այնքան ել ծանր չի ընթանում և շատ շուտ բժշկվում է:

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ԳՈՆՋՈՎ

Մեծերը դժվար են վարակվում գոնջով. գոնջը գլխավորապես տարածված է դպրոցների և մանկատների յերեխաների մեջ:

Գոնջն անցնում է հիվանդից առողջին չլվաման միջոցով կամ հիվանդի դործածած իրերի միջոցով, մանավանդ հիվանդի սանրի միջոցով:

Յերեխաները մեծ մասամբ վարակվում են տնային կենդանիներից, կատուներից, շներից, հավերից և այլն...

Ավելի շատ յենթակա յեն հիվանդության այն յերեխաները, վորոնք թուլակալմ են և ապրում են հակաառողջապահական պայմաններում:

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲՈՒԺՈՒՄ ԳՈՆՋԸ

Գոնջը յերեալուն պես՝ աչքաթուղ չախտի տեսել, այլ իսկույն պիտի դիմել բժշկին:

Չպետք է մոռանալ, վոր միջոցների ուշ ձեռք առնելու հետեվանքով հիվանդությունը կարող է տարիներ քաշել և մեծ վնասներ հասցնել հիվանդին:

Բժշկության համար զանազան միջոցներ կան. յերբեմն ճարպեր են գործ դնում քսելու համար, յերբեմն մազերն են արմատահան անում. վերջերս սկսել են բժշկել գոնջը, ինչպես և մկնատամը Ռենտգենի ճառագայթներով (վորոշ տեսակի ելեկտրական ճառագայթներ), վորն ամենալավ միջոցն է բժշկության տեսակետից:

Վոր միջոցն է ավելի լավ, դա կընտրի այն բժիշկը, վորին պետք է դիմի հիվանդը:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՅԳԱՐԵԼ ԳՈՆՋԻ ԴԵՍ

Ամեն մարդ պետք է լավ իմանա, վոր պելի հեշտ է վարակիչ հիվանդություններից



պաշտպանվելը, քան բժշկվելը, ուստի ամեն կերպ պետք է աշխատել միջոցներ ձեռք առնել չվարակվել գոնջով:

Կանխարդելիչ միջոցները յերկու կարգի յեն, հասարակական և անձնական:

Հասարակակ. միջոցները՝ բարելավել ազգայինակության կենցաղի պայմանները, հսկել և շուտ-շուտ հետազոտման յենթարկել մանկատներն ու դպրոցները, մանավանդ փակ դպրոցները:

Անձնական միջոցներ՝ մաքուր պահել զլուխը, չարաթ 1—2 անգամ լվանալ տաք ջրով և սապոնով. դիտի մազերը խուզել շատ կարճ, մանավանդ յերեխաների զլուխը խուզելիս՝ ուրիշի մկրատ չգործածել, ուրիշի սանրով չսանրվել, ուրիշի գլխարկ չծածկել կամ իր գլխարկն ուրիշին չտալ, ուրիշի անկողին, մանավանդ բարձ, և ուրիշի սպիտակեղեն չգործածել:

Հեռու մնալ տնային կենդանիներից և գոնջով հիվանդներից:

Գոնջից կասկածելի հիվանդներին առանձնացնել. հազցնել կտավից կամ քաթանից կրած գլխարկ և բժշկական քննության յենթարկել, իսկ հիվանդներին անմիջապես տանել բժշկի մոտ և կանոնավոր կերպով բժշկել:

## ՄԱՅԻ 4ՈՁ ԳԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ. Զ Ո Ւ Կ Ն Ե Ր

ԻՆՉ ԲԱՆ Ե ՊՁՈՒԿԸ

Մաշկի վրա հայտնվում են փոքրիկ ուռուցքներ, կարմրավուն, հաճախ և մաշկի գույնի, կորեկի կամ բրնձի հատիկի մեծությամբ, յերբեմն այդ ուռուցիկը ցավում է. մի յերկու օրից հետո ուռուցիկի ծայրը դեղնում է կամ սևանում, սեղմելուց հետո միջից դուրս է գալիս թարախոտ ճարպ, յերբեմն և արյուն:

Մենք օրդեն գիտենք, վոր մաշկն ունի ճարպային գեղձիկներ, վորոնց ծորանը բացվում է մաշկի մակերեւութի վրա:

Մաշկի վրա գտնվող փոշուց, կեղտից քրքրախից և զանազան մանրէներից այդ ճարպային գեղձիկների ծորանը փակվում է, ճարպը կիտվում է գեղձիկի մեջ և գոյանում պղուկ:

Պղուկների շատությունը կապ ունի կաղմվածքի, արյան ընդհանուր շրջանառության և աղիքների անկանոն գործունեյության հետ:

Պղուկների գոյանալուն շատ է նպաստում յերեսին փոշի ցանելը. այս վերջին հազամանքն առավելապես կանանց յերեսի պղուկների գոյանալու պատճառն է:

Աչքի կոպերի վրա գարուկը նույնպես պրգուկ է. կոպի յեզրի ճարպային գեղձիկի անցքի փակվելուց է առաջանում գարուկը:



## ԻՆՉՊԵՍ ՎՈՉՆԱՅՆԵԼ ՊԶՈՒԿՆԵՐԸ

Յերեսին փոշի չցանել. յերեկոները քնից ատաղ սապոնով և տաք ջրով լվացվել ու մի փոքրիկ կոոր բամբակով մաքուր սպիրտ կամ ողի քսել մաշկին:

Տաք ջրով ու սապոնով լվացումը մաքրում է կեղտը, իսկ սպիրտը կամ ողին լուծում է ալելյորդ ճարպն ու այդպիսով ճարպային գեղձիկների ծորանը չի խոցվում ճարպով ու կեղտով և պզուկ չի գոյանում: Իսկ յեթե պզուկները կապ ունեն արյան շրջանառության և աղիքների դործունեյության խանգարման հետ, պետք է դիմել բժշկին և բուժել այդ խանգարումները, վոր անհետանան պրզուկները:

## ԿԱՅԾՈՒՌԻԿ (ՖԻՒՌԻՆԿՈՒ, ՉԻԲԱՆ)

### ԻՆՉ Ե ԿԱՅԾՈՒՌԻԿԸ

Յերբեմն մաշկի ճանգովածքների ուժեղ բորելուց մաշկը բորբոքվում է, կամ ճարպային գեղձիկի բորբոքումն ուժեղանում է ու գոյանում է բորբոքված մեծ կոշտուկ, վորը կոչվում է կայծուռիկ, կամ ինչպես ժողովուրդն է անվանում «չիրան»:

Ամենից շատ կայծուռիկը լինում է պարանոցի վրա, կոնատակերին, գոտկատեղի և նրատեխտեղի վրա:

Այս տեղերն ամենից շատ են քրտնում ու ամենից շատ կեղտոտվում, դրա համար ել

կայծուռիկներն աչք տեղ հաճախ են դուրս գալիս:

Կայծուռիկն սկզբում կարմիր գույնի յե և ցավում է. նա մեծ կոշտուկ է, վորի ծայրին դուրս է ցցված մազը: Կայծուռիկն որեքոր մեծանում է և հոսնում աղամսու ձվի մեծության:

Մի քանի որից հետո ուռուցքի գլխին դոյանում է բշտիկ թարախով լցված, վորը մի 2 որից հետո պատռվում է ու թարախ տալիս. թարախի հետ միասին վայր է ընկնում և մաշկի մեռած մասը. մի քանի որից հետո լավանում է և կայծուռիկի տեղում մաշկի վրա դոյանում է սպի. վորը ցույց է տալիս, թե այնտեղ կայծուռիկ է յեղել մի քանի որ ատաղ:

Յերբեմն կազմվածքի ընդհանուր թուլության պատճառով կայծուռիկները չատանում են, կամ մեկն անհետանում է մյուսն է դուրս գալիս:


Յերբեմն և կայծուռիկը շատ է մեծանում ու շատ է խորն ընկնում, այնպես վոր թարախակույտի կերպարանք է ընդունում:

## ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ԿԱՅԾՈՒՌԻԿՆԵՐԻ ԴԵՍ

Կայծուռիկներից ազատ լինելու համար հարկավոր է լավ խնամել մաշկը, մաքուր պահել, հաճախ բաղնիք դնալ, հաճախ սառը ջուր շփելով և արևի տակ բաց պահելով (արևակեղ դարձնելով):



Կայծառիկն յերևալուն պես՝ սնային մի-  
ջոցներ չգործադրել, այլ դիմել բժշկին, վոր  
գործ դնի գիրքն անհատական միջոցներ՝ չուտ  
առողջանալու և անհատական չուտ աղա-  
տելու հիվանդին:



<< Ազգային գրադարան



NL0285381



738-



Некоторые инфекционные распра-  
страненные болезни

Госиздат ССР Армении  
Эривань

1931